

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈԴՎԱԾ 1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի  
Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-21 օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում՝**

1. 1-ին մասում «տեխնիկական վերազինում» բառերը փոխարինել «տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, փոխադրում կամ» բառերով:

2. 2-րդ մասում «<զլխավոր հատակագծեր>> բառերը փոխարինել «<քաղաքաշինական ծրագրային /տարածական պլանավորման/ փաստաթղթեր>> բառերով:

3. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3. լիազոր պետական մարմին- սույն օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած, բնապահպանության ոլորտում պետության քաղաքականությունն իրականացնող մարմին:

4.<<Սահմանային չափ>> արտահայտությունը հանել:

5. լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-21-րդ մասերով.

<<13. Ազդեցություն - հայեցակարգի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի (մթնոլորտ, ջրային ռեսուրս, հող, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և մարդու առողջության վրա ցանկացած ազդեցություն:

14. Անդրսահմանային ազդեցություն - պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում հայեցակարգի կամ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում առաջացող ազդեցություն, որի ֆիզիկական աղբյուրն ամբողջությամբ կամ մասամբ գտնվում է այլ պետության իրավազորության ներքո գտնվող տարածքում:

15. Ազդեցության ենթարկվող երկիր - հայեցակարգի կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անդրսահմանային ազդեցության ենթարկվող երկիր»:

16. Ծագման երկիր՝ երկիր որի իրավազորության ներքո նախատեսվում է իրականացնել պլանավորված գործունեություն:

17. Կողմ երկիր - «<Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին>> կոնվենցիայի և «<Շրջակա միջավայրի մասին ռազմավարական գնահատման արձանագրության>> համաձայնվող կողմ երկիր:

18. Հասարակայնություն՝ - մեկ կամ մեկից ավել ֆիզիկական կամ իրավաբանական անձ, դրանց խմբեր, կազմավորումներ կամ միավորումներ:>>

19. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում /ՇՄԱԳ/- նախադրեսվող գործունեության իրակ;անացման և հայեցակարգի գործողության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատման գործընթաց.

20. Հաշվետվություն - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների արդյունքներն ամփոփոխ փաստաթուղթ.

21. Բնապահպանական պետական փորձաքննություն - հայեցակարգի և (կամ) նախադրեսվող գործունեության հայտի և ազդեցության գնահատումների հաշվետվությունների, նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ փորձաքննական եզրակացության տրման գործընթաց (այսուհետ՝ փորձաքննություն).

**ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

**«ՀՈԴՎԱԾ 4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն ըստ բնագավառների և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանի դասակարգվում են երեք կատեգորիայի՝ “Ա”, “Բ” և “Գ”:

2. “Ա” կատեգորիան ներառում է նախատեսվող գործունեության հետևյալ տեսակներն ըստ բնագավառների.

1) Էներգետիկայի բնագավառում՝

ա. Ատոմակայաններ կամ ատոմային ռեակտորով աշխատող այլ կառույցներ.

բ. միջուկային վառելիքի հարստացման արտադրություն.

գ. ջերմային էլեկտրակայանքներ.

դ. 5 կմ և ավելի երկարությամբ նավթի կամ գազի կամ քիմիական նյութերի կամ այլ խողովակաշարեր.

ե. 50 ՄգՎտ և ավելի հզորությամբ տաք ջրի կամ գոլորշու արտադրության կայանքներ.

2) Ընդերքօգտագործման բնագավառում՝

ա. երկրաբանական ուսումնասիրություններ՝

1500 գծամետրից ավելի ստորերկրյա լեռնային փորվածքներով, կամ

5000 խմ-ից ավելի մակերևութային լեռնային փորվածքներով, կամ

5000 գծամետրից ավելի հորատանցքերով հորատումների դեպքում.

բ. մետաղական, այդ թվում ռադիոակտիվ օգտակար հանածոների արդյունահանում կամ հանքավայրերի շահագործում կամ հանքաքարի կամ հանքանյութի վերամշակում.

գ. վառելիքաէներգետիկ հումքի /ածխի, նավթի ու գազի/ արդյունահանում կամ հանքանյութի վերամշակում.

դ. պոչամբարներ կամ պոչատարեր կամ դրանց հետ կապված կառույցներ կամ խողովակաշարեր.

ե. նավթի կամ գազի կամ արտադրության թափոնների կամ թունավոր կամ ռադիոակտիվ նյութերի պահման համար ստորերկրյա կառույցների ստեղծում:

3) քիմիական արդյունաբերության ոլորտում

ա. կաուչուկների, ռետինատեխնիկական իրերի և այլ օրգանական նյութերի արտադրություն և վերամշակում,

բ. նավթավերամշակման արտադրություն,

գ. անօրգանական թթուների կամ ալկալիների և այլ նյութերի արտադրություն,

դ. թունավոր կամ քիմիական կամ կենսաբանական հումքով դեղագործական նյութերի արտադրություն,

ե. թունաքիմիկատների կամ քիմիական պարարտանյութերի արտադրություն.

4) Մեքենաշինության կամ մետալուրգիական և էլեկտրատեխնիկական արդյունաբերության բնագավառում՝

ա. գունավոր (ազնիվ, գունավոր, հազվագյուտ) կամ սև մետաղների կամ դրանց համաձուլվածքների արտադրություն.

5) վտանգավոր թափոնների օգտագործման ոլորտում

ա. վտանգավոր կամ քիմիական թափոնների հեռացում կամ այդ նպատակով մշակում,

բ. բնակավայրերի համար կենցաղային կամ ոչ թունավոր թափոնների հեռացում կամ մշակում

6) Սանիտարատեխնիկական կառուցվածքների բնագավառում՝

ա. գերեզմանոցներ կամ դիակիզարաններ կամ դիահերձարաններ, պաթլոգիաանատոմիկներ կամ դիարաններ.

բ. կենդանիների դիակիզում կամ թաղում կամ սպանդանոցներ՝ օրական 500 գլուխ և ավելի

7) Ենթակառուցվածքների բնագավառներում՝

ա. օդանավակայաններ.

8) Ջրային տնտեսության բնագավառում՝

ա. ջրամբարներ 10մլն խմ և ավելի

3. “Բ” կատեգորիան ներառում է նախատեսվող գործունեության հետևյալ տեսակներն ըստ բնագավառների.

1) Էներգետիկայի բնագավառում՝

ա. մինչև 15-50 ՄգՎտ հզորությամբ գոլորշու կամ տաք ջրի արտադրությունաբերական կայանքներ.

բ. հիդրոէլեկտրակայաններ:

2) Ընդերքօգտագործման բնագավառում՝

ա. երկրաբանական ուսումնասիրություններ.

1000-ից մինչև 1500 գծ. մ ստորերկրյա լեռնային փորվածքներով, կամ

1000-ից մինչև 5000 խոր.մ մակերևութային լեռնային փորվածքներով, կամ

1000-ից մինչև 5000 գծ. մ հորատանցքերով հորատումների դեպքում.

բ. օգտակար հանածոների արդյունահանում՝ ոչ մետաղական հանքավայրերի շահագործում կամ հանքանյութի վերամշակում.

գ. Հանքային կամ քաղցրահամ ստորերկրյա ջրերի հանքավայրերի շահագործում.

դ. ստորերկրյա տրանսպորտային ուղիների կամ կառույցների ստեղծում

3) Քիմիական արդյունաբերության բնագավառում՝

ա. կենցաղային քիմիայի (վացող, մաքրող կամ այլ նյութերի) արտադրություն՝ տարեկան 50 տոննա և ավելի.

բ. գազային կամ նավթային կամ նավթաքիմիական կամ քիմիական նյութերի ստորգետնյա պահեստներ:

4) Մետաղների արտադրություն և վերամշակում

ա. մետաղական հանքանյութերի /ներառյալ սուլֆիդային հանքանյութերի/ թրծում ու ազլումերացիա.

Բ. վերամշակված թուջի կամ պողպատի արտադրություն /առաջնային կամ երկրորդային ձուլում/, ներառյալ անընդհատ հոսքով ձուլումը, որոնք գերազանցում են ժամում 2.5 տոննա հզորությունը.

գ. սև մետաղների վերամշակում.

դ. հանքանյութից կամ խտանյութից կամ երկրորդային հումքային նյութերից գունավոր մետաղների արտադրություն:

ե. գունավոր մետաղների մշակում, ներառյալ լեգիրացում, ներառյալ արտադրատեսակների ռեկուպերացիա /զրում, ձուլածագործական արտադրություն և այլն/.

զ. մետաղների կամ պլաստիկ նյութերի մշակում կամ մակերեսապատում՝ էլեկտրոլիտիկ կամ քիմիական պրոցեսների օգտագործմամբ:

5) Շինանյութի և ապակու արդյունաբերության բնագավառում՝

ա. ցեմենտի, կրի արտադրություն.

բ. ասբեստի կամ ասբեստ պարունակող նյութերի արտադրություն,

գ. ապակու, ներառյալ ապակաթելի արտադրություն,

դ. հանքային նյութերի հալեցում՝ ներառյալ հանքային մանրաթելի արտադրություն,

ե. թրծման միջոցով կերամիկական արտադրատեսակների արտադրություն, մասնավորապես՝ տանիքի կղմինդրի, աղյուսի, հրակայուն աղյուսի, կերամիկական սալիկի, քարե կերամիկայի կամ ճենապակե իրերի, որոնց արտադրական հզորությունը գերազանցում է օրական 10 տոննա մեծությունը և/կամ 4 խոր. մ հզորությունը գերազանցող թրծման վառարաններ, որոնց շարման խտությունը գերազանցում է 300 կգ/խոր.մ մեծություն,

6) Փայտի և թղթի արդյունաբերության բնագավառում՝

ա. ստվարաթղթի և թղթի արտադրություն՝ տարեկան 2 տոննա և ավելի,

7) Թեթև արդյունաբերության բնագավառում՝

ա. կաշվի արտադրություն կամ վերամշակում՝ ամսական 0.5 տոննա և ավելի,

բ. արհեստական կաշվի (այդ թվում՝ սինթետիկ) արտադրության սարքավորում՝ ամսական 15000 քառ. դեցիմետր և ավելի,

8) Սննդի արդյունաբերության բնագավառում՝

ա. համակցված կերերի արտադրություն՝ օրական 5 տոննա և ավելի,

բ. մսի կամ մսամթերքի արտադրություն (պատրաստի արտադրանք)՝ օրական 5 տոննա և ավելի,

գ. ծխախոտի արտադրություն կամ վերամշակում՝ օրական 0.5 տոննա և ավելի,

9) Ենթակառույցների բնագավառում՝

ա. մայրուղիների կամ թունելների կամ կամուրջների կամ մեթրոպոլիտենի կամ երկաթուղիների կամ ճանապարհների կառուցում՝ 1կմ և ավելի,

բ. 300 միլիմետր և ավելի տրամագծով գազի կամ նավթի կամ քիմիկատների խողովակաշարեր.

գ. էլեկտրահաղորդման գծեր՝ 110 կիլովոլտ և ավելի լարման,

դ. գերհզոր կապի միջոցներ.

10) Ջրային տնտեսության կամ հողերի մելիորացիայի բնագավառներում՝

ա. աղակալված հողերի աղազերծում քիմիական լուծույթներով՝ 100 հա և ավելի.

բ. չորացնող կամ կոլեկտորադրենաժային համակարգեր՝ 5կմ և ավելի երկարությամբ

գ. 300մմ և ավելի տրամագծով և 1կմ և ավելի երկարությամբ ջրամատակարարման համակարգեր կամ մայր ջրանցքներ.

դ. կեղտաջրերի ընդունման կետեր կամ մաքրման կայաններ՝ հազար և ավելի բնակչություն ունեցող տարածքների համար.

11) Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում՝

ա. Մետաղական կամ ոչ մետաղական հանքավայրերի տարածքների վերականգնում (ռեկուլտիվացիա):

բ. հակասողանքային կամ հակասահքային կամ հակասելավային միջոցառումներ՝ 10 հա և ավելի տարածքների համար.

գ. բացառիկ դեպքերում գետահունների փոփոխում.

4. “Գ” կատեգորիան ներառում է նախատեսվող գործունեության հետևյալ տեսակներն ըստ բնագավառների.

1) Էներգետիկայի բնագավառում հետևյալ գործունեության տեսակները կամ արտադրական միավորները կամ դրանց բոլոր կառույցները կամ ենթակառույցները

ա. երկրաջերմային ջրերի արդյունահանում կամ էներգիայի արտադրություն,

բ. կենսագազի կամ կենսագազով էներգիայի արտադրություն 1Մգվտ և ավելի հզորությամբ.

գ. հողմաէլեկտրակայաններ.

2) Ընդերքօգտագործման բնագավառում

ա. երկրաբանական ուսումնասիրություններ՝

մինչև 1000 գծ. մ հորատանցքերով,

մինչև 1000 խոր.մ մակերևութային լեռնային փորվածքներով հորատումների դեպքում.

3) Գյուղատնտեսության բնագավառում՝

ա. թռչնաբուծական՝ 40000 առանձնյակ և ավելի.

բ. խոզաբուծական՝ 2000 գուլխ և ավելի.

գ. անասնաբուծական՝ 500 գուլխ և ավելի կամ ոչխարաբուծական ֆերմաներ՝ 500 գուլխ և ավելի,

դ. ձկնաբուծական տնտեսություններ՝ տարեկան 100 տոննա և ավելի.

4) Սննդի արդյունաբերության բնագավառում՝

ա. հրուշակեղենի արտադրություն (պատրաստի արտադրանք)՝ օրական 0.5 տոննա և ավելի,

բ. շաքարի կամ շաքարավազի արտադրություն՝ օրական 1 տոննա և ավելի,

գ. ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն՝ օրական 1000 դեկալիտր և ավելի,

դ. գարեջրի արտադրություն՝ օրական 500 դեկալիտր և ավելի,

ե. գինու արտադրություն (խաղողի վերամշակում)՝ օրական 50 տոննա և ավելի,

զ. շամպայն գինիների արտադրություն՝ օրական 500 շիշ և ավելի,

է. լիկյորի կամ օղու արտադրություն՝ օրական 1000 դեկալիտր և ավելի,

ը. կոնյակի արտադրություն՝ օրական 250 դեկալիտր և ավելի,

թ. բնական վլազող միջոցների (օճառ) արտադրություն՝ օրական 1 տոննա և ավելի,

ժ. կաթնամթերքի արտադրություն (վերամշակված կաթ)՝ օրական 20 տոննա և ավելի,

ի. պանրի արտադրություն՝ օրական 30 տոննա և ավելի կաթի վերամշակմամբ,

իա. կենդանական կամ բուսական յուղերի ու ճարպի արտադրություն՝ օրական 0.5 տոննա և ավելի,

իբ. մարգարինի արտադրություն՝ օրական 1 տոննա և ավելի,

5) Ջրային տնտեսության բնագավառում.

ա. արհեստական լճեր կամ ջրավազաններ՝ 100 հազ. խմ և ավելի,

6) Առևտրի կամ սպասարկման բնագավառներում՝

ա. ավտոլիցքավորման կայաններ կամ ստորգետնյա ավտոկայանատեղեր,

7) Ռեկրեացիայի և զբոսաշրջության բնագավառներում՝

ա. զբոսայգիներ կամ պուրակներ կամ անտառպուրակներ կամ պահպանվող տարածքներում հանգստի գոտիներ կամ օբյեկտներ.

բ. ճոպանուղիներ:

8) Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում՝

*ա. անտառվերականգնում կամ անտառպահպանում կամ անտառհատում*

բ. գետերի հունների մաքրում՝ 1 կմ և ավելի.

9) Քաղաքաշինության բնագավառում

Քաղաքաշինական կառույցներ՝ 1500քմ-ից ավելի կառուցապատման մակերեսով կամ կառույցներ, որոնք նախատեսվում է իրականացնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում:

5. Փորձաքննության ենթակա չեն պետական անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհետաձգելի միջոցառումները:»:

6. Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 2-րդ կետում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են այնպիսի տարածքներում, որոնց կարգավիճակը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7. Լիազոր պետական մարմնի որոշմամբ փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 2-րդ կետում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները.

1) այն վարչատարածքային միավորի նախաձեռնությամբ, որի տարածքում նախատեսվում է իրականացնել գործունեությունը,

2) նախարարությունների և պետական իշխանության այլ մարմինների նախաձեռնությամբ,

3) այն համայնքների նախաձեռնությամբ, որոնց տարածքում կամ շրջակայքում պլանավորվում է նախատեսվող գործունեության իրականացումը,

4) հասարակական կազմակերպությունների, առանձին խմբերի նախաձեռնությամբ,

5) լիազոր պետական մարմնի սեփական նախաձեռնությամբ:

### **ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի**

1) 2-րդ պարբերությունը «էկոհամակարգերի» բառից հետո լրացնել «և դրանց առանձին տարրերի, պահպանման օբյեկտների» բառերով.

2) 3-րդ պարբերությունում «և բարեկեցության» բառերը փոխարինել «, բարեկեցության և անվտանգության» բառերով:

### **Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

**«Հոդված 6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

1. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվում է երկու՝ նախնական և հիմնական փուլով:
2. Փորձաքննության նախնական փուլն իրականացվում է ձեռնարկողի կողմից հայտը լիազոր պետական մարմնին ներկայացնելու օրվանից՝ 30 աշխատանքային օրյա ժամկետում:
3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված “Ա” կատեգորիայի նախատեսվող գործունեության, ինչպես նաև անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեությունների վերաբերյալ ազդեցության գնահատման մասին որոշումների կայացման և տեխնիկական առաջադրանքների կազմման համար փորձաքննության նախնական փուլը կարող է երկարաձգվել մինչև 15 աշխատանքային օրով:
4. Փորձաքննության հիմնական փուլում փորձաքննվում են սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված փորձաքննությանն անհրաժեշտ փաստաթղթերը:
5. Փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն՝
  - 1) նախատեսվող գործունեության “Ա” կատեգորիայի դեպքում՝ 60 աշխատանքային օրը.
  - 2) նախատեսվող գործունեության “Բ” կատեգորիայի դեպքում՝ 40 աշխատանքային օրը.
6. Փորձաքննության գործընթացի, ներառյալ՝ հասարակայնության մասնակցության լիարժեքությունն ապահովելու, օրենքով սահմանված տեղեկատվություն ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում, փորձաքննության հիմնական փուլի ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր կատեգորիայի համար, լիազոր պետական մարմնի հիմնավորված որոշմամբ, սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետների կեսը չգերազանցող չափով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ձեռնարկողին:
7. **Նախատեսվող գործունեությունը քաղաքաշինական կամ այլ փորձաքննությունների ենթակա լինելու դեպքում փորձաքննությունն իրականացվում է մինչև դրանց փորձաքննությունը: Եթե դրանց արդյունքում գործունեությունը կրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության որևէ փոփոխություն, այդ դեպքում մեկ անգամ ևս իրականացվում է փորձաքննության հիմնական փուլը:**
8. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված ժամկետները չեն տարածվում հնարավոր անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեությունների փորձաքննության վրա:»:

**ՀՈԴՎԱԾ 5. Օրենք լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6.1-րդ հոդվածով.**

**«Հոդված 6.1. Նախատեսվող գործունեության հայտի ներկայացման կարգը**

1. Ձեռնարկողը սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում նշված որևէ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար պետք է հայտ ներկայացնի լիազոր պետական մարմնին:
2. հայտը պարունակում է՝
  - 1) նախատեսվող գործունեության մասին հիմնական տվյալներ, մասնավորապես անվանումը, տեղադրման վայրը, նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը (առանձնահատկությունները), ծավալը, սկսելու և ավարտելու ժամկետները.
  - 2) նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ հողատարածքի չափը, էներգիայի, ջրային ռեսուրսների, այլ բնական ռեսուրսների և հումքի վերաբերյալ պահանջները.
  - 3) տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագիրը.
  - 4) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության հիմնական տվյալները, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության և վտանգավորության աստիճանը.
  - 5) ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարի տեղեկատվությունը տվյալ վարչատարածքային միավորի զարգացման պլանին նախատեսվող գործունեության համապատասխանության մասին,
  - 6) ազդեցության ենթարկվող համայնքի որոշումը հողհատկացման մասին.
  - 7) Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով նախատեսված լինելու դեպքում՝ այդ օրենքի 4-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի կամ թույլտվության պատճենը:
3. Ծանուցումն ստանալուց հետո, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության վրա անդրսահմանային ազդեցության դեպքում ծագման երկրից ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ժամկետում լիազոր պետական մարմինը գրավոր կամ էլեկտրոնային իրազեկում է ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարին՝ միաժամանակ դրա մասին տեղեկացնելով ձեռնարկողին և ծանուցումը տեղադրելով իր պաշտոնական կայքում:
- Եթե Հայաստանի Հանրապետությունում նախատեսվող գործունեությունը այլ երկրի վրա կարող է ունենալ անդրսահմանային ազդեցություն, ապա լիազոր պետական մարմինը ձեռնարկողից ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ժամկետում, սույն օրենքի 13.2 հոդվածի համաձայն ծանուցում է ազդեցության ենթարկվող երկրի համապատասխան պետական լիազորված մարմնին:
4. Ծանուցումը, սույն օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն լիակազմ չլինելու կամ ներկայացված տեղեկատվության մեջ անճշտություններ հայտնաբերելու դեպքում, լիազորված մարմինը ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ժամկետում այն վերադարձնում է ձեռնարկողին՝ լրակազմման կամ լրամշակման՝ հստակ հիմնավորումներով, դիտողություններով և առաջարկություններով: Ծանուցումը

վերադարձնելու պահից նախնական փուլի ժամկետը համարվում է կասեցված՝ մինչև ձեռնարկողի կողմից լրակազմված և լրամշակված ծանուցումը լիազորված մարմնին ներկայացնելու պահը:

5. Ձեռնարկողը և ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարը, սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունը լիազորված մարմնից ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, տեղական, մարզային, հանրապետական լրատվական միջոցներով և լիազոր մարմնի պաշտոնական կայք էջում, տեղեկություններ են հաղորդում նախատեսվող գործունեության մասին, միաժամանակ նշելով դրա վերաբերյալ կարծիքների (առաջարկություններ և առարկությունների) ներկայացման վայրը և վերջնաժամկետը:

Լրացուցիչ տեղեկատվության տրամադրման և հասարակայնությունից կարծիքներ ստանալու նպատակով ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարը և ձեռնարկողը անցկացնում են հասարակական լսում և տրամադրում խորհրդատվություն:

6. Հասարակայնությունը, նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության ծանուցման օրվանից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կամ գրավոր կարծիքը տրամադրում է ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարին կամ լիազորված մարմնին:

Հասարակայնության կողմից 7 աշխատանքային օրվա ընթացքում ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարին կամ լիազորված մարմնին կարծիքներ չտրամադրելու դեպքում՝ հասարակայնության կարծիքը, իսկ ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարի կողմից 10 աշխատանքային օրվա ընթացքում լիազորված մարմնին կարծիք չտրամադրելու դեպքում՝ ազդեցության ենթարկվող համայնքի կարծիքը համարվում է դրական:

7. Ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարը կարծիքների ստացման համար սահմանված ժամկետի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ժամկետում իր էլեկտրոնային կամ գրավոր կարծիքը և հասարակայնությունից ստացված կարծիքների պատճենները տրամադրում է լիազորված մարմնին և ձեռնարկողին:

*Եթե, ազդեցության ենթարկվող համայնքի ավագանու կողմից, շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությանը վերաբերող հիմնավորումներով փոփոխվել է բացասական կարծիք իր փարածքում փոխալ նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ, ապա այն կարող է հիմք հանդիսանալ փորձաքննական բացասական եզրակացության համար:*

8. Ազդեցության ենթարկվող համայնքի և հասարակայնության համար սույն հոդվածով սահմանված ժամկետների ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ժամկետում, իսկ ազդեցության ենթարկվող երկրի վրա հնարավոր անդրսահմանային ազդեցության առկայության դեպքում սույն օրենքի 13.2-րդ հոդվածով սահմանված ժամկետում լիազորված մարմնին իր կատարած ուսումնասիրությունների և ստացված կարծիքների հիման վրա կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) նախատեսվող գործունեության իրականացումն անթույլատրելի է, որը կայացվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված բնապահպանական սահմանափակումները, ինչպես նաև ազդեցության ենթարկվող համայնքի կարծիքը.

2) նախատեսվող գործունեությունը ենթակա է հիմնական փուլի փորձաքննության, որը կայացվում է հիմք ընդունելով նաև ազդեցության ենթարկվող համայնքի կարծիքը, այս դեպքում ձեռնարկողին է տրվում տեխնիկական առաջադրանք, որը ներառում է գնահատման անհրաժեշտ ծավալը, առաջադրանքները ուսումնասիրության ենթակա խնդիրները, նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա տարածքի նկարագրման պահանջը, հոդված 7-ով սահմանված հաշվետվության բովանդակությունն ըստ սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեությունների կատեգորիաների և լրացուցիչ հասարակական լսումներ անցկացնելու պահանջը: Տեխնիկական առաջադրանքը կազմվում է հաշվի առնելով փորձաքննության նախնական փուլում ուսումնասիրված ծանուցման վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները /տեխնիկական առաջադրանքի ուղեցույցը սահմանում է ՀՀ կառավարությունը/:

3) նախնական փուլում տրամադրվում է փորձաքննական եզրակացություն՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված “Գ” կատեգորիայում ներառված նախատեսվող գործունեություններին:

4) նախատեսվող գործունեությունը ենթակա է անդրսահմանային ազդեցության գնահատման, այս դեպքում տեխնիկական առաջադրանք կարող է չմշակվել, և փաստաթղթերի ծավալն ու բովանդակությունը, ուսումնասիրության ենթակա խնդիրներն ու գնահատման անհրաժեշտ ծավալը կարող են որոշվել լիազորված մարմնի, համապատասխան պետական կառավարման մարմնի և ձեռնարկողի հետ էլեկտրոնային կամ գրավոր համաձայնեցնելով:

## **ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

### **«ՀՈԴՎԱԾ 7. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

1. *Փորձաքննության հիմնական փուլում իրականացվում է նախատեսվող գործունեության ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննություն: Այս փուլում ձեռնարկողը Հայաստանի Հանրապետությունում գործող սփանդարտների, նորմերի և տեխնիկական առաջադրանքի պայմաններին*

համապատասխան իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, որի հիման վրա մշակում և լիազոր պետական մարմին է ներկայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը և սույն հոդվածով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը:

2. Փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթուղթը ՇՄԱԳ հաշվետվությունն է:

Հաշվետվության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են՝

1) նախատեսվող գործունեության նկարագիրը և նպատակը,

2) աշխարհագրական կամ տեխնոլոգիական բնույթի այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման տարբերակը.

3) նախատեսվող գործունեության համապատասխանությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տվյալ տարածքի համար հաստատված հայեցակարգային փաստաթղթերին.

4) հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի վիճակի, բնական ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագիրը.

5) նախատեսվող գործունեության (շինարարության և շահագործման փուլ, վթարային և արտակարգ իրավիճակներ), ներառյալ՝ այլընտրանքային տարբերակների իրականացման դեպքում, շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների հնարավոր փոփոխությունների նկարագիրն ու դրանց ծավալների գնահատումը, ինչպես նաև հնարավոր զգալի փոփոխությունների ենթակա շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների առանձին բաղադրիչների նկարագիրն ու դրանց ծավալների գնահատումը. ընտրված տարբերակի հիմնավորումը,

6) հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումները. դրանց հիմնավորվածությունը, արդյունավետությունը, բավարարությունը,

7) շրջակա միջավայրի վերաբերյալ օգտագործված ելակետային տվյալների կիրառման աղբյուրները.

8) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և հաշվետվության կազմման ընթացքում ի հայտ եկած խնչընդոտների ու դժվարությունների, ներառյալ՝ տեխնիկական առաջադրանքով պահանջվող տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

9) անհրաժեշտության դեպքում նախատեսվող գործունեության մոնիթորինգի ծրագրի (նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկման, հետնախագծային վերլուծության կամ բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկմանն ուղղված գործողությունների պլան) հակիրճ նկարագիրը.

10) նախատեսվող գործունեության հաշվետվությամբ ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմող ամփոփ բովանդակության նյութեր՝ քարտեզներ, սխեմաներ, գրաֆիկներ, աղյուսակներ և այլն:

11) *անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը.*

3. *հաշվետվությունում ներառվում են հասարակայնության մասնակցությանը վերաբերող փաստաթղթերը (ծանուցման հրապարակման պատճենը, ստացված դիմումներն ու առաջարկությունները, հասարակական լուսմների արձանագրությունը): Շահագրգիռ կողմերի և հասարակայնության մասնակիցների կարծիքները հաշվի չառնելու դեպքում ձեռնարկողը հաշվետվությունում ներկայացնում է հիմնավոր պատճառաբանումներ:*

Եթե նախագծային փաստաթղթերը պարունակում են սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կետերին համապատասխանող բաժիններ, ապա դրանք կարող են չներառվել հաշվետվությունում՝ դրանց մասին հղումներ կատարելու պայմանով:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության անաչառությունը և լիարժեքությունն ապահովելու նպատակով լիազոր պետական մարմինը ձեռնարկողից կարող է պահանջել նաև տվյալ գործունեությանը առնչվող փաստաթղթեր և տեղեկատվություն:

5. Տեխնիկական առաջադրանքի պահանջներին չբավարարող հաշվետվությունները չեն ընդունվում, բացառությամբ սույն օրենքի 2.1-րդ գլխով նախատեսված դեպքերի:

6. Սույն օրենքի պահանջների խախտմամբ հիմնական փուլի փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերում սխալ հաշվարկներ, գնահատումներ, բնապահպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջների չհամապատասխանող տվյալներ հայտնաբերելու կամ ոչ լիարժեք բնապահպանական միջոցառումներ ներառված լինելու դեպքերում լիազոր պետական մարմինը կասեցնում է հիմնական փուլի ժամկետը՝ նշելով կասեցման հիմքերը, իր դիտողությունները և առաջարկությունները, ինչպես նաև նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ազդեցության ներքո գտնվող տվյալ շրջակա միջավայրի պահպանության համար կիրառելի բնապահպանական սահմանափակումները, և այդ մասին ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում ձեռնարկողին՝ նշելով կասեցման հիմքերը: Հիմնական փուլի կասեցված ժամկետը շարունակվում է փաստաթղթերի լրամշակված մասը, հավելվածի ձևով, ձեռնարկողի կողմից լիազոր պետական մարմինն ներկայացնելու պահից: Կասեցման ժամկետը կարող է տևել ոչ ավել քան չորս ամիս:

7. Սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը և տեղեկատվությունը՝ սույն հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետում չներկայացնելը, թերություններով կամ ոչ լիարժեք ներկայացնելը հիմք են հանդիսանում փորձաքննական բացասական եզրակացություն տալու համար: Փորձաքննական բացասական եզրակացություն ստացած ձեռնարկողը կարող է նորից դիմել՝ ներկայացնելով սույն հոդվածով պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության լրակազմ ու լրամշակված տարբերակները:

### **ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝**

### **<<ՀՈԴՎԱԾ 8. Փորձաքննությանը ենթակա փաստաթղթերի հրապարակումը և քննարկումը**

1. Հաշվետվությունը և կից ներկայացվող փաստաթղթերը ստանալուց հետո լիազոր պետական մարմինը դրանց օրինակները ոչ ավել, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է տվյալ մարզի կամ ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարներին, համապատասխան պետական մարմնին և մասնագիտական փորձաքննական եզրակացություն կազմելու իրավասություն ունեցող լիազորված անձին (այսուհետ՝ լիազորված անձ): Ազդեցության ենթարկվող համայնքի ղեկավարը փաստաթղթերի օրինակները ստանալու օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում զանգվածային լրատվական միջոցներով տեղեկացնում է փաստաթղթերի հետ ծանոթանալու կամ դրանց մասին տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև դրանց վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ ներկայացնելու ու հասարակական լուծումներ անցկացնելու տեղի և ժամկետների մասին:

2 Հնարավոր անդրսահմանային ազդեցության դեպքում, եթե լիազոր պետական մարմինը ազդեցության ենթարկվող երկրից պատասխան է ստացել նախատեսվող գործունեության ազդեցության գնահատմանը մասնակցելու մտադրության մասին, ապա լիազոր պետական մարմինն ազդեցության ենթարկվող երկիր է ներկայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության մեկ օրինակը և սույն օրենքի 13.2-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկացնում դրա վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ ներկայացնելու ժամկետների մասին:»

3. Լիազոր պետական մարմինը, ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը սույն հոդվածի 1-ին մասի համաձայն լրատվական միջոցներով տեղեկացնելուց հետո սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեությունների “Ա” կատեգորիայի համար՝ 20, “Բ” կատեգորիայի համար՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում ու ապահովում են հասարակայնության կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը և լուծումները: Հասարակայնության կարծիքը նշված ժամանակամիջոցում ներկայացվում է ազդակիր համայնքի ղեկավարներին կամ անմիջապես լիազոր պետական մարմնին: Սույն մասով սահմանված ժամկետները լիազոր պետական մարմինը կարող է երկարաձգել օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներով:

Նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի համար և հնարավոր անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության դեպքում հասարակական լուծումներն անցկացվում են լրատվական միջոցներով տեղեկատվությունը հրատարակելուց հետո՝ 10 աշխատանքային օրվանից ոչ շուտ:

Եթե ազդակիր համայնքի թիվը մեկից ավելի է, հասարակական լուծումների վայրը որոշում է լիազոր պետական մարմինը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետները լրանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ազդակիր համայնքների ղեկավարները հասարակայնության կարծիքը և իրենց կարծիքները ներկայացնում են լիազոր պետական մարմնին:

5. Համայնքի ազդակիր լինելու կամ չլինելու հարցը վերջնականապես որոշում է լիազոր պետական մարմինը:

6. Համապատասխան պետական մարմինները փաստաթղթերը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում են իրենց կարծիքը լիազոր պետական մարմնին:

7. Եթե սույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերի համաձայն ոչ մի կարծիք սահմանված ժամկետում չի ներկայացվել լիազոր պետական մարմնին, ապա համարվում է, որ փաստաթղթերի վերաբերյալ բացասական կարծիք չկա:

8. Սույն հոդվածի կիրառումը սահմանափակվում է կապված պետական և առևտրական գաղտնիքների հետ և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

### **ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 9-րդ հոդվածում՝**

1. 5-րդ մասի՝

1) առաջին նախադասության «ստանալուց հետո 70-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «ձեռնարկողից ստանալուց հետո սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ժամկետներում» բառերով.

2) երրորդ նախադասության «քան 180 օր» բառերը փոխարինել «քան սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետները, իսկ նախատեսվող գործունեության հնարավոր անդրսահմանային ազդեցության դեպքում՝ սույն օրենքի 13.2-րդ հոդվածով սահմանված ժամկետներին համապատասխան» բառերով.

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ, 5.2-րդ, 5.3-րդ և 5.4-րդ մասերով.



«5.1. Մասնագիտական եզրակացության մշակման փուլն սկսվում է սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում լիազոր պետական մարմնի կողմից փաստաթղթերը լիազորված անձին հանձնելու պահից:

5.2. Լիազոր պետական մարմինը սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված կարծիքները 3 աշխատանքային օրվա ընթացքում, անդրսահմանային ազդեցության դեպքում նաև անդրսահմանային ազդեցության վերաբերյալ կարծիքները, ինչպես նաև առկայության դեպքում անդրսահմանային ազդեցությունների վերաբերյալ խորհրդակցությունների արդյունքները ներկայացնում է լիազորված անձին, որոնք հաշվի են առնվում մասնագիտական եզրակացությունը կազմելիս, իսկ կարծիքների բացակայության դեպքում՝ լիազոր պետական մարմինը կարծիքների համար սահմանված ժամկետի ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է լիազորված անձին:

Մասնագիտական եզրակացությունը կազմելիս սույն մասով սահմանված կարծիքները հաշվի չառնելու դեպքում լիազորված անձն իր կողմից կազմած մասնագիտական եզրակացության հետ միասին լիազոր պետական մարմնին է ներկայացնում նաև դրանց չընդունման վերաբերյալ հիմնավորում:

5.3. Լիազորված անձը սույն հոդվածի 5.2-րդ մասով սահմանված կարծիքները լիազոր պետական մարմնից ստանալուց հետո մասնագիտական եզրակացությունը լիազոր պետական մարմին է ներկայացնում՝ սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեությունների «Ա» կատեգորիայի համար՝ 10, «Բ» կատեգորիայի համար՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում:

5.4. Լիազորված անձի հիմնավորման դեպքում լիազոր պետական մարմինը կարող է երկարաձգել մասնագիտական եզրակացության ներկայացման ժամկետները՝ սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախատեսվող գործունեությունների «Ա» կատեգորիայի համար՝ 8, «Բ» կատեգորիայի համար՝ 5 աշխատանքային օրով, իսկ նախատեսվող գործունեության հնարավոր անդրսահմանային ազդեցության դեպքում՝ սույն օրենքի 13.2-րդ հոդվածով սահմանված ժամկետներին համապատասխան:»:

3. 7-րդ մասի բ) կետում «կարծիքները» բառից հետո լրացնել «, իսկ նախատեսվող գործունեության հնարավոր անդրսահմանային ազդեցության դեպքում՝ անդրսահմանային ազդեցության վերաբերյալ կարծիքները և անդրսահմանային ազդեցությունների վերաբերյալ խորհրդակցությունների արդյունքները» բառերով:

#### **ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 10-րդ հոդվածում՝**

1) 1-ին մասի՝

ա. «30-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «20 աշխատանքային օրվա ժամկետում» բառերով,

բ. «կարծիքների» բառից հետո լրացնել «, իսկ նախատեսվող գործունեության հնարավոր անդրսահմանային ազդեցության դեպքում՝ անդրսահմանային ազդեցության վերաբերյալ կարծիքների և անդրսահմանային ազդեցությունների վերաբերյալ խորհրդակցությունների արդյունքների» բառերով.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Հասարակական լուսմների ժամկետի և տեղի մասին հայտարարությունը միաժամանակ հրատարկվում է զանգվածային լրատվական միջոցներով:»:

3) 4-րդ մասի «1-ին կետում» բառերը փոխարինել «2-րդ մասում» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի պահանջները չեն տարածվում սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված «Գ» կատեգորիայի նախատեսվող գործունեությունների նկատմամբ:»:

#### **ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 11-րդ հոդվածում՝**

1. 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ

1.«Նախատեսվող գործունեությունների «Ա» կատեգորիայի համար՝ 10, «Բ» կատեգորիայի համար՝ 5 աշխատանքային օրերի ընթացքում, իսկ նախատեսվող գործունեության հնարավոր անդրսահմանային ազդեցության դեպքում՝ սույն օրենքի 13.2-րդ հոդվածով սահմանված ժամկետներին համապատասխան, լիազոր պետական մարմինը՝ մասնագիտական եզրակացության, հասարակական քննարկումների արդյունքների արձանագրությունների և իր կողմից իրականացված փորձաքննության արդյունքների հիման վրա կայացնում է որոշում փորձաքննական եզրակացություն տալու մասին:»>

2. 1-ին կետից հետո լրացնել 1.1 կետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1. քննապահպանական փորձաքննական եզրակացությունը բովանդակությունը՝

1) հաշվեփութության լիարժեքության, հավաստիության և հիմնավորվածության գնահատականը,

2) համառոտ տեղեկատվություն հայեցակարգի կամ նախատեսվող գործունեության մասին,

3) փորձաքննության գործընթացում՝ հայեցակարգի կամ նախատեսվող գործունեության դիրարկված բնութագրերը,

4) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ տեղեկատվություն,

5) այլընտրանքային տարբերակների միջև կատարած ընտրության գնահատականը,

6) քննապահպանական պահանջներին ու սահմանափակումներին համապատասխանության դիրարկման արդյունքները,

- 7) նախատեսվող բնապահպանական միջոցառումների արդյունավետության գնահատականը,
- 8) շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի և հետնախազգային վերլուծության միջոցառումների գնահատականը,
- 9) գործընթացի մասնակիցների ծանուցման և քննարկման ապահովման արդյունավետության գնահատականը և դրանց արդյունքները,
- 10) հայեցակարգի դրույթների կամ նախատեսվող գործունեության թույլատրելիության և անթույլատրելիության վերաբերյալ հիմնավորված եզրահանգում: >>:

3. 2-րդ մասից հանել 1-ին նախադասությունը.

4. 8-րդ մասը «կողմերին» բառից հետո լրացնել «՝ նշելով եզրակացության կազմման հիմքերը, բացասական եզրակացության դեպքում բոլոր համապատասխան հիմնավորումները» բառերով:

**ՀՈԴՎԱԾ 11. Օրենքի 13-րդ հոդվածը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ**

**<<Հոդված 13. Փորձաքննության գործընթացի հետ կապված վճարումներ**

1. Փորձաքննության իրականացման հետ կապված ծախսերը ամբողջությամբ ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Փորձաքննական գործընթացի՝ նախնական և հիմնական փուլերի իրականացման համար ներկայացնողը, ձեռնարկողը վճարում է պետական տուրք՝ <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

4. Պետական տուրքը վճարվում է.

ա) փորձաքննության նախնական փուլում՝ փորձաքննական եզրակացության կամ տեխնիկական առաջադրանքի տրման համար,

բ) փորձաքննության հիմնական փուլում՝ փորձաքննական եզրակացության տրման համար:

**ՀՈԴՎԱԾ 12. 14-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել**

**ՀՈԴՎԱԾ 13 Օրենքը լրացնել 2.1 գլխով հետևյալ խմբագրությամբ.**

**«ԳԼՈՒԽ 2.1**

**ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀՈԴՎԱԾ 13. 1. ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Եթե շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանից դուրս, ինչպես նաև եթե կողմ երկրում նախատեսվող գործունեությունն ունի անդրսահմանային ազդեցություն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի վրա, ապա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն և փորձաքննությունը իրականացվում է «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված այլ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն օրենքի պահանջներին համապատասխան:

Լիազոր պետական մարմինը շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցության փորձաքննական եզրակացությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն հաստատման:

2. Անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության ազդեցության գնահատման ընթացակարգերի լիարժեքությունն ապահովելու և գնահատման արդյունքները հաշվի առնելու անհրաժեշտության դեպքում լիազոր պետական մարմինը համապատասխան հիմնավորմամբ կարող է երկարաձգել սույն օրենքով սահմանված ժամկետները, բայց ոչ ավելի, քան նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով:

**ՀՈԴՎԱԾ 13.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Եթե Հայաստանի Հանրապետության տարածքում սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված որևէ նախատեսվող գործունեություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա վտանգավոր անդրսահմանային ազդեցություն, ապա լիազոր պետական մարմինը դրա մասին սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ծանուցում է ազդեցության ենթարկվող կողմ երկրի համապատասխան լիազոր պետական մարմնին, միաժամանակ հայցելով տեղեկատվություն՝ կողմ երկրում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման համար պահանջվող փաստաթղթերի և հասարակական լուծումների ընթացակարգի վերաբերյալ:

2. Եթե այլ բան չի նախատեսված համապատասխան Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով, ապա ծանուցումը և հարցումը առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝
  - 1) նախատեսվող գործունեության, ներառյալ՝ դրա հնարավոր անդրսահմանային ազդեցության վերաբերյալ.
  - 2) նախատեսվող գործունեության վերաբերյալ հնարավոր որոշումների կայացման բնութագիրը.
  - 3) փորձաքննության ընթացակարգերի և ժամկետների վերաբերյալ.
  - 4) փորձաքննությանը մասնակցելու մտադրության մասին կողմ երկրի կողմից պատասխան տալու ժամկետները:
3. Փորձաքննությանը մասնակցելու մտադրության մասին ազդեցության ենթարկվող կողմ երկրի կողմից պատասխան տալու ժամկետը չի կարող գերազանցել ծանուցումն ստանալու օրվանից 45 աշխատանքային օրը, եթե երկկողմ կամ բազմակողմ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ ժամկետ չի նախատեսված:
4. Եթե ծանուցում ստացած կողմ երկիրը պաշտոնապես հրաժարվել է փորձաքննությանը մասնակցելուց կամ սահմանված ժամկետում չի պատասխանել մասնակցելու իր մտադրության մասին, ապա փորձաքննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված ընթացակարգով:
5. Լիազոր պետական մարմին, ծանուցում ստացած կողմ երկրի կողմից փորձաքննության գործընթացին մասնակցելու իր մտադրության մասին պաշտոնական գրությունն ստանալուց հետո, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ազդեցության ենթարկվող կողմ երկրին ներկայացնում է ազդեցության գնահատման անհրաժեշտ փաստաթղթերը՝ նշելով դրանց վերաբերյալ կարծիքի ներկայացման ժամկետը, որը չի կարող գերազանցել նրա կողմից փաստաթղթերն ստանալու օրվանից 60 աշխատանքային օրը, եթե երկկողմ կամ բազմակողմ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ ժամկետ չի նախատեսված:
6. Լիազորված մարմինը օժանդակում է ազդեցության ենթարկվող կողմ երկրի համապատասխան մարմինների և առավել հնարավոր ազդեցության ենթակա տարածքների հասարակայնության միջև նախատեսվող գործունեության վերաբերյալ փաստաթղթերի տարածմանը:
7. Լիազորված մարմինը և ձեռնարկողը հնարավոր ազդեցության ենթակա կողմ երկրի համապատասխան լիազորված մարմնի հետ էլեկտրոնային կամ գրավոր համաձայնեցնում են հնարավոր անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության փաստաթղթերի վերաբերյալ խորհրդակցությունների անցկացման ձևն ու ընթացակարգը, ազդեցության կանխման կամ նվազեցման միջոցները և ապահովում են այդպիսի խորհրդակցությունների իրականացումը:
8. Անհրաժեշտության դեպքում ձեռնարկողն ապահովում է փաստաթղթերի թարգմանությունը, ազդեցության ենթակա կողմ երկրից ստացված կարծիքների և տվյալ գործունեությանը առնչվող նյութերի թարգմանությունը:
9. Եթե հնարավոր անդրսահմանային ազդեցությունը պարզվում է փորձաքննության առավել ուշ շրջանում, ապա լիազորված մարմինը ձեռնարկողի հետ միասին պարտավոր են ապահովել սույն հոդվածով սահմանված պահանջները:

**ՀՈՂՎԱԾ 13.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՎԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՅԼ ԵՐԿՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Եթե կողմ երկրի տարածքում նախատեսվող գործունեությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցություն և դրա մասին ծանուցումը ներկայացված է Հայաստանի Հանրապետության որևէ պետական կառավարման մարմին, ապա տվյալ պետական կառավարման մարմինը ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկում է լիազորված մարմնին:
 

Լիազոր պետական մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրազեկում է ծագման երկրի համապատասխան լիազորված մարմնին՝ ծանուցումն ստանալու և փորձաքննությանը մասնակցելու կամ չմասնակցելու իր մտադրության մասին:
2. Հայաստանի Հանրապետության լիազոր պետական մարմինը փորձաքննությանը մասնակցելու կամ չմասնակցելու վերաբերյալ իր ընդունած որոշման մասին էլեկտրոնային կամ գրավոր տեղեկացնում է, ծագման երկրի համապատասխան լիազորված մարմնին, ծանուցման մեջ նշված ժամկետում և կարգով: Եթե ծանուցման մեջ պատասխան տալու ժամկետ ամրագրված չէ, ապա լիազոր պետական մարմինը ծանուցող երկրին պատասխանում է ծանուցումն ստանալուց հետո 45 աշխատանքային օրվա ընթացքում:
 

Եթե երկկողմ կամ բազմակողմ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ, ապա լիազոր պետական մարմինը ծանուցման քննարկումն ապահովում է սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով:
3. Եթե լիազոր պետական մարմինը որոշում է ընդունել փորձաքննությանը մասնակցելու վերաբերյալ, ապա փորձաքննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջները, միաժամանակ տեղեկացնելով սույն օրենքի

պահանջների, ներառյալ՝ փորձաքննության, փաստաթղթերի թարգմանության, հասարակայնության մասնակցության ապահովման և սույն օրենքով պահանջվող այլ ծախսերի համար նրա կողմից անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովելու մասին:

4. Լիազոր պետական մարմինը էլեկտրոնային կամ գրավոր համաձայնեցնում է ծանուցումը ներկայացնող ծագման երկրի համապատասխան լիազոր պետական մարմնի և ծագման երկրի ձեռնարկողի հետ անհրաժեշտ փաստաթղթերի ծավալն ու բովանդակությունը, հնարավոր անդրսահմանային ազդեցություն ունեցող նախատեսվող գործունեության փաստաթղթերի վերաբերյալ խորհրդակցությունների անցկացման ձևն ու ընթացակարգը, ազդեցության կանխման կամ նվազեցման միջոցները և ապահովում են այդպիսի խորհրդակցությունների իրականացումը՝ համագործակցելով ծանուցումը ներկայացնող երկրի համապատասխան լիազոր պետական մարմնի և ծագման երկրի ձեռնարկողի հետ:

5. Եթե երկկողմ կամ բազմակողմ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն այլ բան չի նախատեսված, ապա լիազոր պետական մարմինը փաստաթղթերն ստանալուց հետո սույն օրենքի 8-11-րդ և 13-րդ հոդվածներով և սույն օրենքով ու իրավական այլ ակտերով սահմանված կարգով ապահովում է փաստաթղթերի ուսումնասիրությունն ու դրանց քննարկումը: Լիազոր պետական մարմինը փորձաքննական եզրակացությունը ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը: Հաստատումից հետո փորձաքննական եզրակացությունը ուղարկվում է ծանուցող երկրին:

6. Եթե լիազոր պետական մարմինը տեղեկացված է եղել ծագման երկրի տարածքում նախատեսվող գործունեության մասին, որը կարող է անդրսահմանային ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի վրա և դրա վերաբերյալ տվյալ երկրից ծանուցում չի ստացվել, ապա լիազոր պետական մարմինը դրա մասին նախապես տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում է կողմ երկրի համապատասխան լիազոր պետական մարմնին՝ նախատեսվող գործունեության անդրսահմանային ազդեցության գնահատման գործընթացի վերաբերյալ ծանուցում ստանալու ակնկալիքով:

#### **ՀՈԴՎԱԾ 14. Օրենքի 15-րդ հոդվածում՝**

1. 1-ին մասը լրացնել հետևյալ տողերով.

- թափոնների գործածություն,
- սանիտարա-տեխնիկական ծառայություն,
- ջրային տնտեսություն և հողերի մելիորացիա,
- անտառային տնտեսություն,
- առևտուր և սպասարկում:

2. <<Տարածքային պլանավորման փաստաթղթերը>> բառերը փոխարինել <<Տարածական պլանավորման փաստաթղթերը>> բառերով:

3. 5-րդ մասի «90-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «60 աշխատանքային օրվա ընթացքում, որը լիազոր պետական մարմնի հիմնավորմամբ կարող է երկարաձգվել 30 օրացուցային օրով՝ դրա մասին գրավոր տեղեկացնելով հայեցակարգը ներկայացնողին» բառերով.

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ, 5.2-րդ, 5.3-րդ, 5.4-րդ, 5.5-րդ, 5.6-րդ, 5.7-րդ, 5.8-րդ և 5.9-րդ մասերով.

«5.1. Ներկայացնողը հայեցակարգի հետ միասին լիազոր պետական մարմնին է ներկայացնում սույն հոդվածի 5.2-րդ մասի պահանջներին համապատասխան մշակված հայեցակարգի գործողության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատման հաշվետվությունը, հայեցակարգի հասարակական լուծման արձանագրությունը և հայեցակարգի վերաբերյալ ստացված կարծիքները:

5.2. Հաշվետվության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են՝

1) հայեցակարգի համառոտ բովանդակությունը, նպատակը, կապը կամ համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված դրան առնչվող այլ հայեցակարգային փաստաթղթերի հետ.

2) ազդեցության ենթակա տարածքին առնչվող բնապահպանական խնդիրները և դրանց արտացոլումը տվյալ հայեցակարգում.

3) հայեցակարգի շրջանակներում նախատեսվող գործունեության ֆիզիկական բնութագրերը և պահանջվող բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի, տեխնոլոգիական պրոցեսների, արտանետումների, արտահոսքերի, թափոնների, ֆիզիկական ներգործությունների և արտակարգ ու վթարային իրավիճակների հնարավոր ռիսկերի նկարագրությունը.

4) հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագիրը և դրանց հնարավոր փոփոխությունը՝ առանց տվյալ հայեցակարգի դրույթի իրականացման.

- 5) հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագիրը և դրանց վրա ազդեցությունը՝ տվյալ հայեցակարգի դրույթի իրականացման դեպքում.
- 6) հայեցակարգում առաջադրված լուծումների այլընտրանքային տարբերակների (այդ թվում՝ գրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը,
- 7) հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունն ու ծախսերը,
- 8) հայեցակարգի գործողության ընթացքում ազդեցության մոնիթորինգի ծրագիրը,
- 9) գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, դժվարությունների, ներառյալ՝ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.
- 10) հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները.
- 11) հաշվետվության ամփոփ բովանդակությունը:

5.3. Հաշվետվությունը կազմվում է հաշվի առնելով հասարակական լուծումների արդյունքում նրանց կողմից ներկայացված կարծիքները, իսկ դրանք հաշվի չառնելու դեպքում՝ հաշվետվությունում ներառում է կարծիքները հաշվի չառնելու վերաբերյալ հիմնավոր պատճառաբանումները:

5.4. Եթե հայեցակարգը պարունակում է սույն հոդվածի 5.2-րդ մասի որևէ ենթակետերին համապատասխանող բաժիններ, ապա դրանք կարող են չներառվել ազդեցության գնահատումների համապատասխան հաշվետվություններում՝ դրանց մասին հղումներ կատարելու պայմանով:

5.5. Հայեցակարգը, դրա վերաբերյալ հասարակական լուծումների արձանագրությունը, հասարակական լուծումների արդյունքում ստացված կարծիքները և հաշվետվությունը ներկայացնողի կողմից ներկայացնելուց հետո լիազոր պետական մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է լիազորված անձանց:

Լիազորված անձը, սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, հաշվի առնելով հասարակայնության կարծիքները մշակում և 20 աշխատանքային օրվա ընթացքում մասնագիտական եզրակացությունը ներկայացնում է լիազոր պետական մարմնին: Հասարակայնության կարծիքները հաշվի չառնելու դեպքում լիազորված անձը մասնագիտական եզրակացության հետ միասին ներկայացնում է նաև դրանց վերաբերյալ հիմնավորված պատճառաբանումները:

5.6. Լիազոր պետական մարմինը մասնագիտական եզրակացությունն ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է մասնագիտական եզրակացության վերաբերյալ հասարակական լուծումներ՝ հասարակական լուծումներն անցկացնելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվական միջոցներով տեղեկացնելով հասարակական լուծումների ենթակա փաստաթղթերի բովանդակությանը ծանոթանալու, լուծումների անցկացման տեղի և ժամկետների վերաբերյալ:

Եթե հասարակական լուծումներից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում լուծումների մասնակիցների կողմից լիազոր պետական մարմնին կարծիքներ չեն ներկայացվում, ապա այն համարվում է որպես դրական կարծիք:

5.7. Լիազոր պետական մարմինը հայեցակարգի վերաբերյալ փորձաքննական եզրակացությունը կազմում է հաշվի առնելով նաև հասարակայնության կողմից ներկայացված կարծիքները, իսկ դրանց չընդունելու դեպքում տալիս է հիմնավոր պատճառաբանումներ:

5.8. Շրջակա միջավայրի վրա հնարավոր անդրսահմանային ազդեցություն ունեցող հայեցակարգի փորձաքննությունն իրականացվում է սույն օրենքի 2.1-րդ գլխով սահմանված կարգով:

5.9. Սույն հոդվածի 5.1-րդ, 5.2-րդ և 5.3-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ կամ պահանջվող փաստաթղթերն ու տեղեկատվությունը թերություններով կամ ոչ լիարժեք ներկայացնելը հիմք է հանդիսանում փորձաքննական գործընթացի կասեցման համար:

Գործընթացը կվերսկսվի ներկայացնողի կողմից պահանջված փաստաթղթերը և տեղեկատվությունը ներկայացնելու դեպքում:

5. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մասով.

«6.1. Փորձաքննական եզրակացություն չունեցող կամ բացասական եզրակացություն ստացած հայեցակարգը պետք է ուժը կորցրած ճանաչվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

#### **ՀՈԴՎԱԾ 15. Օրենքի 16-րդ հոդվածում 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ է) ենթակետով.**

<<է) համագործակցել այլ երկրների համապատասխան լիազոր պետական մարմինների հետ շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցության գնահատման հարցերով:>>

#### **ՀՈԴՎԱԾ 16. Օրենքի 17-րդ հոդվածում 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:**

#### **ՀՈԴՎԱԾ 17. ՕՐԵՆՔԻ ՌԻԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության կամ հայեցակարգի ազդեցության փորձաքննության վրա: